Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Ղ. Աղայանի անվան հ. 63 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Տեխնոլոգիա» (3 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում /Ձև 1/,
- 1 լուսանկար՝ 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,
- ինքնակենսագրություն / Ձև 5 /,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ դեկտեմբերի 11-ից մինչև դեկտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ դեկտեմբերի 26-ին՝ **ժամը 14:30-ին**, Երևանի Ղ. Աղայանի անվան հ. 63 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Կիևյան 9:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /010/ 22-03-69 հեռախոսահամարով:

Դպրոցի տնօրեն՝ /Լ.Փիրումյան/